



Փետրվարի 06, 2024 թ.

Հայտարարություն. HSBC Հայաստան

HSBC-ն տեղեկացնում է, որ համաձայնություն է ձեռք բերել ամբողջությամբ իրեն պատկանող դուստր կազմակերպություն հանդիսացող «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (HSBC Հայաստան) Արդշինբանկ ՓԲԸ-ին (Արդշինբանկ) վաճառելու շուրջ: **Գործարքը կիրականանա կարգավորող մարմինների հաստատումները ստանալու պայմանով:**

HSBC Հայաստանը վաճառելու որոշումը կայացվել է ռազմավարական վերանայման արդյունքում, ըստ որի HSBC խմբի նպատակն է՝ կապիտալը վերաբաշխել կապերի ապահովման և ռազմավարական նշանակության տեսանկյունից ավելի լայն հնարավորություններ ընձեռող համաշխարհային ուղղություններ:

Գործարքը նախատեսվում է ավարտին հասցնել տասներկու ամսվա ընթացքում: Մինչ այդ HSBC Հայաստանը կշարունակի սպասարկել իր հաճախորդներին բնականոն կերպով:

Գործարքի համաձայն՝ HSBC Հայաստանի բոլոր աշխատակիցները գործընթացի ավարտից հետո կանցնեն աշխատանքի Արդշինբանկում: Վերջինիս կփոխանցվի նաև այդ պահի դրությամբ HSBC Հայաստանի հաճախորդների սպասարկումը:

HSBC Holdings plc

HSBC Holdings plc-ն՝ HSBC խմբի մայր ընկերությունն է, որի գլխամասը գտնվում է Լոնդոնում: Խումբը իր հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխարհի 62 երկրներում և տարածաշրջաններում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 3,021 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերությունն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 6 գրասենյակի և ավելի քան 300 աշխատակցի միջոցով: Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: